

մեծաքանակ երկաթ՝ վաճառատան փորձագէտ վարիչն ըլլալով միշտ գլխաւորապէս ինք Ասատուր Գարագաշեան, որ ա՛լ այնուհետեւ հարստացած ընդարձակուած՝ կը յորջորջուէր Տեմիրհի Պաշի Աւստուր :

Ետքերը փոխադրուեցաւ Ղալաղիայէն Սիրքէճի Իսկէլէսի, ուր ինք եղաւ դարձեալ հաստատողն երկաթի վաճառականութեան հրապարակին, ինչպէս իր պարագայք կաւանդեն. իրմէ ետքն և իր թեւարկութեամբն և խորհրդատուութեամբ կը զարգանան հոն Եսայեան Յովհաննէս և Մկրտիչ եղբարք ալ : Ասատուր Գարագաշեան և ընկերք իրենց վաճառատան մէջ միշտ պատրաստ կուենային միջնաչափ (average) 35-40000 ոսկիի վաճառք : Երկու անգամ արդիւնաւորապէս անդամակցած է ինք Կ. Պոլիսի Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հոգաբարձութեան. անդամ ու գանձապետ եղած է նաև Մայր Եկեղեցիի Թաղական Խորհուրդին. Պոյաճը գիւղի եկեղեցիին ալ բազմօք օգտակար եղած է՝ իր այդ գիւղը բնակելուն առիթով, և յետ իր վախճանին (կարծենք 1867) կտակած է Հիւանդանոցին մեծկակ գումար մը՝ ինչպէս կը գրէ Ժամանակ ժամանակակից հանդէսն՝ հրատարակելուն առթիւ իր մահագոյժը :

Իրմէ ետքն այդ գործը շարունակեց իր աներձագը՝ Ռուբէն Գրիգորեան, որ տասը տարի մը գործեց Բալիի հետ, 1863ին անոր հետ դարձեալ ձեռնարկեցին հանքային գործի մը և տալով մեծ կորուստ՝ վերջապէս գոցուեցան, ինչպէս և Բալի որդին կորսնցուց հանքի գործի մը մէջ 75000 ոսկի : Ադամանդի՛, ոսկիի՛, արծաթի՛, պղընձի՛, երկաթի՛, շինուածաքարի՛, վերջապէս հանքի՛, լիւքսի՛, կոիււի՛ գործեր՝ չե՛ն ունեցած աղէկ վերջ եւ չպիտի՛ ունենան ալ, քանի որ կայ հզօր բնութիւն մը պատժող այդպիսիները Թրանսպալէն մինչեւ Ուրալ եւ